

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ. <<Ախուրյանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ

ՀԱՍՑԵ. ՀՀ Շիրակի մարզ, գ. Ախուրյան Ախուրյանի խճ.14

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏ ahuryanibk@mail.ru

1.ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համաձայն Ընկերության Կանոնադրության և Կորպորատիվ Կառավարման Կանոնագրքի պահանջների, Ընկերությունը սահմանել է հետևյալ կորպորատիվ կառուցվածքը.

ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով.

Ընկերությունը չունի Բաժնետերերի ընդհանուր ժողով, քանի որ ընկերությունը հանդիսանում է 100% պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն, որի բաժնետոմսերը ամբողջությամբ պատկանում են Հայաստանի Հանրապետությանը: Ընկերության կառավարման լիազորությունները վերապահված է Շիրակի մարզպետին:

բ) Խորհուրդ.

Հիմք՝ <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի հոդված 83, կետ 1(բաժնետիրական ընկերություններում խորհուրդ ստեղծվում է 50 և ավելի բաժնետերերի դեպքում):

գ) Գործադիր մարմին

Ընկերությունը չունի գործադիր մարմին, Ըկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր տնօրենը:

Ընկերության նշանակալից բաժնետերեր են.

1. Ընկերությունը ունի մեկ բաժնետեր ի դեմս Հայաստանի Հանրապետության, տիրապետում է 1052 բաժնետոմս, որը կազմում է 42080հազ.դրամ, ընկերության կանոնադրական կապիտալի 100% -ը:

2. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Հաշվետու տարում չի գումարվել տարեկան բաժնետերերի ընդհանուր ժողով, քանի որ ընկերությունը հանդիսանում է 100% պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն, որի բաժնետոմսերը ամբողջությամբ պատկանում են Հայաստանի Հանրապետությանը: Ընկերության կառավարման լիազորությունները վերապահված է Շիրակի մարզպետին:

3. ԽՈՐՀՈՒՐԴ

Ընկերությունը չունի խորհուրդ: Ընկերությունը խորհուրդ չի ստեղծել, քանի որ ունի մեկ բաժնետեր, ընկերությունը հանդիսանում է 100% պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություն, որի բաժնետոմսերը ամբողջությամբ պատկանում են Հայաստանի Հանրապետությանը:

4. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Քանի որ ընկերությունը չունի խորհուրդ, չեն ստեղծվել նաև հանձնաժողովներ:

5. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Ըկերության չունի գործադիր մարմին: Ըկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր տնօրենը, որը նշանակվում է ՀՀ Շիրակի մարզպետի կողմից:

Գործադիր տնօրեն՝ անուն ազգանուն՝	Շողոկաթ Մակարյան
Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝	15 հունվարի 1953 թվականի
Կրթություն՝	Երևանի պետական բժշկական ինստիտուտ
Աշխատանքային փորձառություն՝	38 տարի

Հիմնական որակավորում՝ առողջապահության կազմակերպիչ, բժիշկ՝ սրտաբան
Ընկերությունում աշխատած տարիներ՝ **37 տարի**

Ընկերության տնօրենի պարտականությունները

1. Տնօրինում է ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում ընկերության անունից,
2. Ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
3. Գործում է առանց լիազորագրի,
4. Տալիս է լիազորագիր,
5. Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային,
6. Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային և այլ հաշիվներ,
7. Առաջարկություններ է նախապատրաստում Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ,
8. Ընկերության Ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը,
9. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարմանը,
10. Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին,
11. Աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
12. Կատարում է Ընկերության վարչության նախագահի պարտականությունները:

6. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Ընկերության ներքին աուդիտի ֆուկցիաներն իրականացնում է ՀՀ Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժինը:

7. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ընկերությունում խորհուրդ ստեղծված չէ, հետևաբար կորպորատիվ քարտուղար չունի:

8. ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ

2014 թվականին Ընկերությունում արտաքին աուդիտ իրականացվել է ՀՀ Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի կողմից:

9. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերության տարեկան և շահութաբաժնի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվել է մարզպետարան, որպես 100% պետական մասնակցությամբ առևտրային

կազմակերպություն : 2014 թվականին ֆինանսա-տնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթը կազմել է 158 հազ. դրամ, շահութաբաժնի չափը՝ 79,2 հազ. դրամ

Ընկերությունը հաշվետվություններ ներկայացրել է հարկային մարմիններ, Հայաստանի Հանրապետության Առողջապահության Նախարարության Գործակալություն:

Գործադիր տնօրեն

Շ. Մակարյան